մարից կտանք նորա «Հայերը Ռուսիայում» տեսութեան շարունակութիւնը։

Կովկասեան գիւղատնտեսական ընկերութիւնը, ինչպէս հաղորդում է «Մշակը», որոշել է տօնել վերջինիս խմբագիր Ա. Բալանթարի 25 ամեայ գիւղատնտեսական գործունէութեան յոբելեանը։

ՄԱՀԳՈՑԺ

† ՅՈՎՀԱՆՆԷՍ Ա. ԲԱՀԱՆԱՑ ՄԿՐԵԱՆ

Սեպտեմբերի 14-ին Կ. Պոլսից Ամեն. Օրմանեան սըրբազանից ստացուած մի հեռագիր գուժեց մեզ «Լուսայ»-ի երկարամեայ և մշտական աշխատակից և ծանօթ գրագէտ— Մկրեան Տ. Յովհաննէսի մահը։

Այնուհետև խմբագրութիւնս ստացաւ և սգոյ յայտարարութիւնը հանգուցեալի մահուան և թաղման մասին։

Առաջիկային թողնելով հանգուցեալի մանրամասն կենսագրութիւնը, առ այժմ հարկաւոր ենք համարում ասել, որ հ. Մկրեանը օժտուած էր բազմատեսակ շնորհներով, քաջ ծանօթ էր հայ լեզուին, պատմութեան ու գրականութեան, մշտապէս աշխատակցում էր տաճկահայ և արտասահմանեան բազմաթիւ հայ թերթերին իբրև հմուտ բանասէր, հանգ. Մկրտիչ Խրիմեան կաթողիկոսի Պոլսի Պատրիարքութեան ժամանակ վարում էր Պատրիարքական տեղապահի պաշտօնը և յայտնի էր որպէս խելօք և փորձուած վարիչ և պատուական հայ։

Խմբագրութիւնս իւր խորին վիշտն է յայտնում աշխատաւոր հովուի և գրագէտի մահուան համար։